Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Արաքս համայնքի Ապագա գյուղի բնակիչ Լուսվարդ Աբրահամի Մելքիյանի 2023 թվականի օգոստոսի 18-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի բնակիչ Լուսվարդ Աբրահամի Մելքիյանին սեփականության իրավունքով պատկանող /04-012-0042-0020/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 220,6քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ համաձայն «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 20227SYCVN:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի շինությունների 1քմ-ի համար 1209 ՀՀ դրամ, 1209*220.6քմ=266705 /երկու հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր հինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Ինքնակամ կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 266705 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Ապագա գյուղի N900325162155 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 26
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

27 սեպտեմբերի 2023 թվական N991-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Գայ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.026 հա հողամասի /ծածկագիր՝ 04-033-0046-0010, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի ընդհանուր օգտագործման/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

27 սեպտեմբերի 2023 թվական N992-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի սեփականությունը հանդիսացող 0.0148 հա հողամասի /ծածկագիր՝ 0201-0005, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2023 թվականի N 993-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Ալբերտ Թովմասի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0013-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Մ. Հերացու փողոց, 17 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2023 թվականի N 994-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Արմենուհի Ռազմիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0014-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Ջորավար Անդրանիկի փողոց, 6-րդ նրբանցք,12 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2023 թվականի N 995-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Ալբերտ Թովմասի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0013-0016 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Մ. Հերացու փողոց, 19 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Արաքս համայքն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2023 թվականի N 996-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Լաուրա Նորայրի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0113-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Ուղեկալների փողոց, 2-րդ նրբանցք, 28 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 27
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 997-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Հրայր Նորայրի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0113-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Ուղեկալների փողոց, 2-րդ նրբանցք, 26 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբերի 2023 թվական N 998-Ա

ՍԱՄՎԵԼ ՋՈՆՐԵԹԻ ԽՈՍՏԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Սամվել Ջոնրեթի Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը ***պարզեցի***՝

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Սամվել Ջոնրեթի Խոստեղյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ.Ապագա, 17 փ., 31 տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ վերջինիս կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0131-0002 կադաստրային ծածկագրերով հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է իրականացվում է ձկնաբուծություն:

Անձի կողմից իրականացվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված խախտումներ, որոնք առաջացնում են տուգանքի նշանակումներ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հինսապատիկի չափերով:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին կազմված արձանագրությունը:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Սամվել Ջոնրեթի Խոստեղյանին ուղարկվել է փոստային առաքմամբ 2023 թվականի օգոստոսի 29-ին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 29–ին տրված N LO111012274AM ստացականը/, սակայն նշված բեռնային համարով առաքանու էլեկտրոնային տվյալների համաձայն՝ Սամվել Ջոնրեթի Խոստեղյանն այն դեռևս չի ստացել :

Վերոգրյալից և վարչական վարույթի շրջանակներում լսում իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սամվել Ջոնրեթի Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ մինչև վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցումը ստանալուց հետո ծանուցմամբ սահմանված լսում իրականացնելու ժամկետի ավարտը:

2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 999-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 04-023-0039-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Ե. Չարենցի փողոց, 35 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1000-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Կարինե Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-0005-0028 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Խորոնք Սևահողեր թաղամաս 2-րդ փողոց, 64 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբերի 2023 թվական N 1001-Ա

ՍԱՄՎԵԼ ԽՈՍՏԵՂՅԱՆԻ ԵՎ ԱՆՈՒՇ ԽՈՍՏԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Սամվել Խոստեղյանի և Անուշ Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը ***պարզեցի՝***

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Սամվել Խոստեղյանի և Անուշ Խոստեղյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ.Ապագա, 17 փ., 31 տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ վերջինիս կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0037-0001 կադաստրային ծածկագրերով հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է իրականացվում է ձկնաբուծություն:

Անձի կողմից իրականացվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված խախտումներ, որոնք առաջացնում են տուգանքի նշանակումներ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հինսապատիկի չափերով:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին կազմված արձանագրությունը:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Սամվել Ջոնրեթի Խոստեղյանին ուղարկվել է փոստային առաքմամբ 2023 թվականի օգոստոսի 29-ին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 29–ին տրված N LO111019284AM ստացականը/, սակայն նշված բեռնային համարով առաքանու էլեկտրոնային տվյալների համաձայն՝ հասցեատերերն այն դեռևս չեն ստացել :

Վերոգրյալից և վարչական վարույթի շրջանակներում լսում իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սամվել Խոստեղյանի և Անուշ Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ մինչև վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցումը ստանալուց հետո ծանուցմամբ սահմանված լսում իրականացնելու ժամկետի ավարտը:

2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1002-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամաբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների՝ N 27072023-04-0065 տրված 27 հուլիսի 2023 թվականին և N 2492840 տրված 31 հունվարի 2008 թվականին և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 0408634GAULJ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում գտնվող Ռոման Բաբաջանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-086-0004-0026, հողամասի չափը 0.0242 հա և 04-086-0004-0038 հողամասի չափը 0.0633 հա կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի միավորումից տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ջրարբի, Հ. Թումանյան փողոց, 5 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023 թվականի N 1003-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 04-064-0007-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Մեծամոր, Ե. Չարենցի փողոց, 1 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 28
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1004-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Վանուշ Մխիթարի Դունամալյանին սեփականության իրավունքով պատկանող 04-064-0017-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Մեծամոր, Ա. Խաչատրյան փողոց, 20 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023թվականի N 1005-Ա

ԱՐԱՅԻԿ ՍՈՒՐԵՆԻ ՏՈՆՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Ջրառատ գյուղի բնակիչ Արայիկ Սուրենի Տոնոյանի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի բնակիչ Արայիկ Սուրենի Տոնոյանի կողմից Ջրառատ գյուղի Երկաթուղայինների փողոցի 6 հասցեում գտնվող տանը կից ինքնակամ կառուցված 26.3քմ մակերեսով կցակառույցը /բնակարան՝ 22,2քմ, աստիճան՝ 4,1քմ/ ՝համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023KVTZEX:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1209 Հայաստանի Հանրապետության դրամ. 1209*26,3քմ=31797 /երեսունմեկ հազար յոթ հարյուր իննսունյոթ/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 31797 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Ջրառատ գյուղի N900325182153 հաշվեհամարին:
4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբերի 2023 թվական N 1006-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՄԻԿ ՄՐԱԶԻ ԳԵԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս քննության առնելով վարչական վարույթի գործը՝ Արաքս համայնքի Առատաշեն գյուղի բնակիչ Ռոմիկ Մրազի Գելոյանի կողմից իրեն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի(երի)/հողամասի(երի) նկատմամբ հարկային պարտավորությունները չկատարելու մասին ***պարզեցի***՝

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Ռոմիկ Գելոյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Այգեստան փ.6/ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1–ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ վերջինիս ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 04-013-0003-0026,04-013-0121-0066 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի(երի)/հողամասի(երի) նկատմամբ հարկային պարտավորությունները չկատարելու մասին,որի արդյունքում կուտակվել էր ≈ 116.000 ՀՀ դրամ պարտք:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Ռոմիկ Գելոյանին է հանձնվել առձեռն 2023 թվականի մայիսի 12-ին /հիմք՝ Ռոմիկ Գելոյանի կողմից ծանուցագրի մեկ օրինակի վրա 2023 թվականի մայիսի 12-ին արված գրառումը և ստորագրությունը/:

Ռոմիկ Մրազի Գելոյանը 22.05.2023թ.-ին ներկայացել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարան:Արաքսի համայնքապետարանի և Ռոմիկ Մրազի

Գելոյանի միջև 22.05.2023թ.-ին կնքվել է վճարման պլան-ժամանակացույց՝ չորս ամիս ժամկետով:

Արդյունքում Ռոմիկ Մրազի Գելոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել է համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 22-ի N 492-Ա որոշմամբ

Հաշվի առնելով, որ Ռոմիկ Մրազի Գելոյանն ամբողջությամբ կատարել է գույքահարկի գծով հարկային պարտավորությունները /հիմք՝ վճարման անդորրագրերը/ և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2–րդ մասի «ա» ենթակետով, 51-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արաքս համայնքի Առատաշեն գյուղի բնակիչ Ռոմիկ Մրազի Գելոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Վարչական վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբերի 2023 թվական N 1007-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, 158–րդ, 161-րդ և 164–րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 19–րդ կետը, Արաքս համայնքի ղեկավարի օգնական Նարինե Դավթյանի 2023 թվականի սեպտեմբերի 26–ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի ղեկավարի օգնական Նարինե Դավթյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդն ամբողջությամբ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ, 2023 թվականի հոկտեմբերի 2–ից նոյեմբերի 2-ը ներառյալ:
2. Արաքս համայնքի ղեկավարի օգնական Նարինե Դավթյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել Արաքս համայնքի ղեկավարի օգնական Միսակ Միսակյանին:
3. Նարինե Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի նոյեմբերի 3–ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2022 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1008-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Ալվարդ Գրիշայի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0002-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Ջորավար Անդրանիկի փողոց, 8-րդ նրբանցք, 35 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1009-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Ասատուր Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-0053-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Խորոնք, Է. Սրապիոնյան փողոց, 20 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվականի N 1010-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Արամ Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0014-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Ջրառատ, Զորավար Անդրանիկի փողոց, 6-րդ նրբանցք, 14 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 սեպտեմբերի 2023թվականի N 1011-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ, 25-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի դեկտեմբերի 24-ի N1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2023թվականի օգոստոսի 29-ի N01/7/05313-2023 գրությունը, անշարժ գույքի սեփականության իրավունքի N 24052012-04-0130 վկայականը և Արման Անդրեասյանի 2023 թվականի մարտի 30-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արման Ապրեսիկի Անդրեասյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Վ. Տերյան փողոցի 2 հասցեում գտնվող 0.12 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հող:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն՝ սույն 1200 քմ մակերեսով հողամասը հանել բնակավայրերի բնակելի կառուցապատման հաշվեկշռից և ներառել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3. Հողամասին տալ հասցե՝ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Առատաշեն գյուղ, Վ. Տերյան փողոց 2:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023թվականի N 1012-Ա

ԱՐՄԱՆ ԱՊՐԵՍԻԿԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Առատաշեն գյուղի բնակիչ Արման Ապրեսիկի Անդրեասյանի 2023 թվականի մարտի 30-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի բնակիչ Արման Ապրեսիկի Անդրեասյանին սեփականության իրավունքով պատկանող /04-013-0042-0001/ ծածկագրով բնակելի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 136,0քմ արտաքին մակերեսով խանութը, 55,8քմ արտաքին մակերեսով պահեստը, 58,8քմ արտաքին մակերեսով ավտոլվացման կետը, 63,3քմ մակերեսով ծածկը, 176,2քմ արտաքին մակերեսով հիմքը, 0,7քմ արտաքին մակերեսով զուգարանը, 13,1քմ արտաքին մակերեսով պահեստը, 0,3քմ պարիսպը՝ համաձայն «Ավագ Ավագյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2023SGEPLT:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է հասարակական նշանակության շինությունների 1քմ-ի համար՝ 2056 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ շինությունների 1քմ-ի համար՝ 616,8 Հայաստանի Հանրապետության դրամ, 2056*503,9քմ=1036018 /մեկ միլիոն երեսունվեց հազար

տասնութ/ Հայաստանի Հանրապետության դրամ,616,8*0,3քմ=185 /մեկ հարյուր ութսունհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը 1036018+185=1036203 /մեկ միլիոն երեսունվեց հազար երկու հարյուր երեք/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 1036203 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Առատաշեն գյուղի N900325153162 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2023 թվական N 1013-Ա

ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ԵՆՈՔՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող, Նարեկ Գևորգի Ենոքյանին սեփականության իրավունքով պատկանող 04-056-0037-0013, կադաստրային ծածկագրերով 0.135 հա հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու վերաբերյալ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն, ***պարզեց հետևյալը.***

Նարեկ Գևորգի Ենոքյանը/ հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Հայկաշեն, 3փ., 25տ. / թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսնապատիկի չափով:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով

սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54–րդ հոդվածի 1–ին և 2–րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

Նարեկ Գևորգի Ենոքյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի սեպտեմբերի 1-ին տրված LO111076534AM ստացականը և 2023 թվականի սեպտեմբերի 7-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9–ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 23-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 31-ի Նարեկ Գևորգի Ենոքյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի սեպտեմբերի 28–ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Նշված հողամասը Նարեկ Գևորգի Ենոքյանի կողմից չի օգտագործվում ոչ նպատակային նշանակությամբ, մինչդեռ առկա է գործառնական նշանակության և հողատեսքի ինքնակամ փոփոխում:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտողին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2–րդ պարբերությամբ սահմանված դրույթների խախտման չափով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով՝ 50.000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ և 5–րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող

հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում Նարեկ Գևորգի Ենոքյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-056-0037-0013 կադաստրային ծածկագրով 0.135 հա հողամասի գործառնական նշանակությունը և հողատեսքերը ինքնակամ փոփոխվել են :

Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ 2-րդ պարբերությամբ սահմանված խախտում, այն է՝ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերությունով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով,

հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Նարեկ Գևորգի Ենոքյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-056-0037-0013 /0.135 հա/ կադաստրային ծածկագրով հողամասի գործառնական նշանակությունը և հողատեսքը ինքնակամ փոփոխելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող Նարեկ Գևորգի Ենոքյանին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ, հակառակ պարագայում հողամասը բերել նախնական տեսքին և համապատասխանեցնել նպատակային և գործառնական նշանակությանը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

29 սեպտեմբերի 2023 թվական N 1014-Ա

ԳՆԵԼ ԽՈՍՏԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Գնել Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը ***պարզեցի***՝

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Գնել Խոստեղյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ.Ապագա, 17 փ., 31 տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ վերջինիս կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող 04-012-0131-0002 կադաստրային ծածկագրերով հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է իրականացվում է ձկնաբուծություն:

Անձի կողմից իրականացվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված խախտումներ, որոնք առաջացնում են տուգանքի նշանակումներ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հինսապատիկի չափերով:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի օգոստոսի 22-ին կազմված արձանագրությունը:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Գնել Խոստեղյանին ուղարկվել է փոստային առաքմամբ 2023 թվականի օգոստոսի 30-ին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 30–ին տրված N LO111042840AM ստացականը/, սակայն նշված բեռնային համարով առաքանու էլեկտրոնային տվյալների համաձայն՝ Գնել Խոստեղյանն այն դեռևս չի ստացել :

Վերոգրյալից և վարչական վարույթի շրջանակներում լսում իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գնել Խոստեղյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել՝ մինչև վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցումը ստանալուց հետո ծանուցմամբ սահմանված լսում իրականացնելու ժամկետի ավարտը:

2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 29
Արաքս համայնք